ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2012 թվականի թիվ 120- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012թ. դեկտեմբերի 11-ի <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին> N 1094- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) հաստիքացուցակում ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

< Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 70-3.1-15>.

2) հաստիքացուցակից հանել հետևյալ տողը.

< Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 70-3.3-2/>:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 13
ք.Իջևան